EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

06 Փետրվարի, 2012թ.

Մամլո հաղորդագրություն
Press release

Համահայկական կրթական 5-րդ խորհրդաժողով

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը ս.թ. օգոստոսի 10-14-ը կազմակերպում է Համահայկական կրթական 5-րդ խորհրդաժողովը:

Խորհրդաժողովում քննարկման նյութ են դառնալու 2010 թվականի 4-րդ խորհրդաժողովի բանաձևի դրույթների կատարված աշխատանքները, կադրերի պատրաստման և վերապատրաստման, փորձի փոխանակման, Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ նախագծվող միջոցառումների, ինչպես նաև Սփյուռքում ազգային կրթադաստիարակչական գործին աջակցության հարցերը:

Խորհրդաժողովը բաց է, կարող են մասնակցել Թեմական և Ուսումնական խորհուրդների, կրթության և դաստիարակության հարցերով զբաղվող կազմակերպությունների, հաստատությունների ներկայացուցիչները, համայնքների ղեկավարները, կրթօջախների տնօրենները, ուսուցիչներ, հեղինակներ:

Խորհրդաժողովի կազմակերպչական, մասնակիցների կեցության և սննդի ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը:

Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները:

Կից ներկայացնում ենք նախատեսված խորհրդաժողովի ծրագրի նախագիծը, հայտարարությունը և մասնակցության հայտաձևը:

Առդիր՝ 7 էջ:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613.234.3710 Fax: 613.234.3444

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓՅՈՒՌՔ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 5-ՐԴ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԿԱՁՈՐ
10-14 օգոստոս 2012թ.

Երևան, 0028, Կառավարության 3 շենք, հեռ.. 58-13-91 E-mail. spyurq@yahoo.com, info@edu.am
hppt://www. edu.am, hppt://www.armedu.am

Նախագիծ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ 5-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

10-14 օգոստոս, 2012թ., Ծաղկաձոր

Առաջին օր, 10 օգոստոս, ուրբաթ

11.00-12.30	**Խորհրդաժողովի հանդիսավոր բացում**
13.00-14.30	Մեկնում Ծաղկաձոր
14.30-16.00	Մասնակիցների ընդունում, տեղավորում
19.00-20.00	Ընթրիք
20.00-21.00	Հանգիստ
21.00-22.00	Մասնակիցների գրանցում, աշխատանքային նյութերի տրամադրում, աշխատանքային խորհրդակցություն

Երկրորդ օր, 11 օգոստոս, շաբաթ

09.00 -10.00	Նախաճաշ
10.00-11.00	**<u>ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐ</u>.** • ՀՀ կրթական քաղաքականությունը և բարեփոխումների ընթացքը • Կրթական բարեփոխումները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում
11.00 –11.15	Ընդմիջում
11.15-12.15	**ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.** ՀՀ ԿԳՆ-ի Սփյուռքի կրթական ոլորտում իրականացվող քաղաքականության և Համահայկական կրթական 4-րդ խորհրդաժողովի բանաձևի դրույթների իրագործման վերաբերյալ հաշվետվություն
12.15-12.45	Ընդմիջում
12.45-14.00	**ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.** Հայաստան-Սփյուռք համաժողովի « Լեզու, կրթություն» աշխատանքային խմբի առաջարկությունների քննարկում
14.00- 15.30	Ճաշ, հանգիստ
15.30 -16.00	**ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.** Ցեղասպանության 100-ամյակին նվիրված կրթության ոլորտում համահայկական և ներհամայնքային միջոցառումների և ծրագրերի մշակում
16.00–17.00	Շարունակություն փոքր խմբերում՝ ըստ տարածաշրջանների
17.00–17.30	Ընդմիջում
17.30-18.15	Ամփոփում փոքր խմբերում
18.15-19.00	Ամփոփում լիագումար նիստում
19.00-20.00	Ընթրիք

20.00-21.00 Կրթության և դաստիարակության ոլորտում հիմնախնդիրների և նախապատվությունների քննարկում (*Երկկողմ և բազմակողմ հանդիպումներ՝ ըստ երկրների և տարածաշրջանների)*

Երրորդ օր, 12 օգոստոս, կիրակի

Նախասրահում գործելու է ուսումնական նյութերի ցուցահանդես-վաճառք

09.00 - 10.00 Ն ա խ ա ճ ա շ

10.00 – 11.00 **Աշխատանք առանձին մասնախմբերով.**

Ա. մասնախումբ
Ծրագրամեթոդական հենքը Սփյուռքի ամենօրյա վարժարաններում. քննարկում

Բ. մասնախումբ
Ծրագրամեթոդական հենքը և մեկօրյա դպրոցների դասակարգման հիմնախնդիրը. քննարկում

11.00–11.30 Ը ն դ մ ի ջ ու մ

11.30–12.30 Մասնախմբերի աշխատանքի շարունակություն և ամփոփում

12.30–13.00 Ը ն դ մ ի ջ ու մ

13.00-14.00 **Աշխատանք առանձին մասնախմբերով.**

Գ. մասնախումբ.
Մեկօրյա դպրոցներ որպես լրացուցիչ կրթության կազմակերպման հաստատություններ. քննարկում

Դ. մասնախումբ
Լրացուցիչ կրթության և դաստիարակության կազմակերպման հիմնախնդիր ամենօրյա վարժարաններում. քննարկում

14.00–15.00 Ճ ա շ

15.00-16.00 Մասնախմբերի աշխատանքի շարունակություն և ամփոփում

16.00-16.30 Ը ն դ մ ի ջ ու մ

16.30–18.00 **ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.**
Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների դերը՝ Սփյուռքում կրթական ծրագրերի իրագործման և կրթադաստիարակչական գործունեության խթանման գործում

18.00-19.00 Հ ա ն գ ի ս տ

19.00-20.00 Ը ն թ ր ի ք

20.00-21.00 Կրթության և դաստիարակության ոլորտում հիմնախնդիրների և նախապատվությունների քննարկում (*Երկկողմ և բազմակողմ հանդիպումներ՝ ըստ երկրների և տարածաշրջանների)*

Չորրորդ օր, 13 օգոստոս, երկուշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
10.00 – 11.00	**Աշխատանք առանձին մասնախմբերով.**
	Ե. մասնախումբ. Մանկավարժական կադրերի որակի բարձրացման և կրթական գործընթացի բարելավման ծրագրեր
	Զ. մասնախումբ. ՀՀ-ում համալսարանական կրթության կազմակերպման հիմնախնդիրներ. առաջնահերթությունների քննարկում
11.00-11.15	Ընդմիջում
11.15-12.30	**ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.** Հանդիպում ՀՀ հրատարակչությունների հետ. - նոր ուսումնական նյութերի ներկայացում - ուսումնական գրականության ստեղծման, տարածման և թարգմանության հիմնախնդիրներ
12.30-12.45	Ընդմիջում
12.30-14.00	**Լիագումար նիստի շարունակություն.** Սփյուռքի մանկական հանդեսների և դպրոցական լրատուների աջակցության հիմնախնդիր. քննարկում
14.00–15.00	Ճաշ
15.00-17.00	Բանաձևային հանձնախմբերի աշխատանք
17.00-18.30	**Խորհրդաժողովի փակում, բանաձևերի ընթերցում և հաստատում**
18.30-20.00	Հանգիստ
20.00-22.00	Պաշտոնական ճաշկերույթ

Հինգերորդ օր, 14 օգոստոս, երեքշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
11.00	Վերադարձ Երևան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2012 թվականի օգոստոսի 10-14-ը կազմակերպում է Համահայկական կրթական 5-րդ խորհրդաժողովը:

Խորհրդաժողովում քննարկման նյութ են դառնալու 2010 թվականի 4-րդ խորհրդաժողովի բանաձևի դրույթների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները, ծրագրամեթոդական առկա հիմնահարցերը, կադրերի պատրաստման և վերապատրաստման, փորձի փոխանակման, Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ նախագծվող միջոցառումներ, ինչպես նաև Սփյուռքում ազգային կրթադաստիարակչական գործին աջակցությանն ուղղված հետագա համատեղ քայլերը:

Խորհրդաժողովի մասին նախնական պատկերացում կազմելու և մասնակցության նպատակահարմարությունները որոշակիացնելու նպատակով՝ կից ներկայացնում ենք Խորհրդաժողովի աշխատանքային ծրագրի նախագիծը: Աշխատանքային ծրագրի և Խորհրդաժողովի օրակարգի վերաբերյալ ակնկալում ենք ստանալ Սփյուռքի կրթության և դաստիարակության ոլորտում գործող մարմինների, կազմակերպությունների և անձանց առաջարկությունները մինչև ս.թ. հունիսի 10-ը: Առաջարկություններով կարող են հանդես գալ նաև տարբեր պատճառներով Խորհրդաժողովի աշխատանքներին անմիջականորեն մասնակցելու հնարավորություն չունեցող մասնագետները: Առաջարկությունների հիման վրա լրամշակված աշխատանքային ծրագիրը կներկայացնենք մինչև հուլիսի 1-ը:

Կարևոր է նաև նշել թեմատիկ նիստերի ժամանակ որպես զեկուցող հանդես գալու պատրաստակամությունը և զեկույցի թեման: Լիագումար նիստերում ելույթի տևողությունը չպետք է գերազանցի 15 րոպե, իսկ մասնախմբերում՝ 10 րոպե:

Խորհրդաժողովը գումարվում է բաց հրավերի տարբերակով և նրան կարող են մասնակցել հայ համայնքներում ազգային կրթության և դաստիարակության խնդիրներով գործող մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների 1-ական ներկայացուցիչներ: Թեմական և Ուսումնական խորհուրդների, կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող համահայկական և համայնքային կազմակերպությունների, հաստատությունների, ըստ նպատակահարմարության, կարող են հանդես գալ թվով երկուսից ավելի ներկայացուցիչներով: Մասնակցելու համար հարկ է լրացնել կից ներկայացվող հայտը և այն փոխանցել ՀՀ կրթության և գիտության նախարարություն մինչև 2012թ. հուլիսի 15-ը:

Մասնակցության և ելույթների հարցում նախապատվությունը տրվում է արտերկրի հայ համայնքներում գործող Թեմական և Ուսումնական խորհուրդների, կրթության և

դաստիարակության խնդիրներով զբաղվող համահայկական և համայնքային կազմակերպությունների, հաստատությունների ներկայացուցիչների: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մեծ նշանակություն է տալիս օրակարգային հարցերի վերաբերյալ պատվիրակությունների նախնական քննարկումների արդյունքների բանաձևմանն ու ներկայացմանը Խորհրդաժողովում համապատասխան մասնախմբում զեկույցի տեսքով:

Խորհրդաժողովում կարող են ՀՀ կրթության և գիտության նախարարության և տվյալ երկրի կամ տարածաշրջանի ներկայացուցիչների միջև քննարկման առարկա դառնալ նաև աշխատանքային ծրագրում չընդգրկված և տարածաշրջանային կամ երկկողմանի նշանակություն ունեցող հարցեր, որոնց լուծումը կարող է դրականորեն ազդել տվյալ երկրում կամ տարածաշրջանում ազգային կրթության և դաստիարակության գործի կազմակերպման վրա:

Խորհրդաժողովի կազմակերպական, մասնակիցների կեցության և սննդի ծախսերը Խորհրդաժողովի ընթացքում ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Խորհրդաժողովի սկիզբն ու վերջ են համարվում ծրագրում նշված առաջին և վերջին միջոցառումները: Մասնակիցները պետք է հոգան ճանապարհածախսը:

Պարզաբանումների, հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև առաջարկություններ և ելույթները ներկայացնելու համար դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարություն.

Հասցե. 0010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարության տուն 3,
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, սենյակ 619, 616
Հեռ.՝ 374 10 58-13-91
Ֆաքս՝ 374 10 52-52-07
Էլ. փոստ՝ spyurq@yahoo.com կամ info@edu.am
Ինտերնետային կայքէջ՝ www.edu.am կամ www.armedu.am

Արմեն ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ 5-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

1. Ձեր կողմից ներկայացվող կազմակերպությունը/կրթօջախը

Երկիր (երկրներ) ______________________________

Քաղաք (նստավայր) ______________________________

Անվանում ______________________________

____

Web site. ______________________________

E-mail ______________________________

Հեռախոսահամար ______________________________

2. Մասնակցի անձնական տվյալները (ըստ անձնագրի).

Անուն ______________ Ազգանուն ______________

Պաշտոն (առնչություն ներկայացվող կազմակերպության/կրթօջախի հետ) ____________

____

Անձնական հեռախոսահամար. ______________________________//

______________________________// ______________________________

Անձնական e-mail (պարտադիր է). ______________________________

____

Քաղաքացիություն ______________________________

Անձնագրի սերիան և համարը ______________ Սեռը ______ // ______

իգ. ար.

Ծննդյան օրը, ամիսը, տարին ______________